ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար պահնորդական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀԱԿ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N ՍՀԱԿ-ԳՀԾՁԲ-21/1-1 պայմանագրում 2021 թվականի հունվարի 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ - N ՍՀԱԿ-ԳՀԾՁԲ-21/1-1 պայմանագրի գնումը կատարվել էր <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդածի 6-րդ կետի համաձայն: ՀՀ առողջապահության նախարարի 24.12.2020 թվականի N 4581-Ա հրամանով հաստատվել է ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Փոփոխության նկարագրություն-Համաձայնագրով հաստատվել է N ՍՀԱԿ-ԳՀԾՁԲ-21/1-1 պայմանագրի վճարման ժամանակացույցը /հավելված 2/:

Փոփոխության հիմնավորում-Համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 18-րդ կետը և N ՍՀԱԿ-ԳՀԾՁԲ-21/1-1 պայմանագրի 7.15 կետը:

Պատվիրատու՝ ***ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ***